ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » հունիսի 2016 թ. N 149 -Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N45-Ա որոշմամբ հաստատված N2 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը.

Հրամայում եմ՝

1. Հաստատել գյուղատնտեսական նշանակության հողերում հրդեհային անվտանգության կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին և նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
---------- հրամանի

ԿԱՆՈՆՆԵՐ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերում հրդեհային անվտանգության պահանջները:

2. Գյուղատնտեսական նշանակության հողերում հրդեհային անվտանգությունն ապահովելու համար պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները և քաղաքացիները ղեկավարվում են «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոններով և հրդեհային անվտանգության այլ նորմատիվ փաստաթղթերով:

3. Սույն կանոններում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) դյուրավառ հեղուկ՝ բաց անոթում 61^0 C-ից ցածր բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկ,

2) հակահրդեհային միջտարածություն՝ կրակի տարածումը կանխարգելելու նպատակով նախատեսված տարածություն,

3) բարձր հրդեհավտանգություն՝ իրավիճակ, երբ առկա նյութերը ունակ են առանց նախօրոք տաքացնելու բռնկվել նվազ կալորիական ջերմային աղբյուրի կարճատև ազդեցությունից:

II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերը՝ մինչև գյուղատնտեսական աշխատանքներ սկսելը, ապահովում է այդ աշխատանքներում ներգրավված անձանց հակահրդեհային սարքավորումներով և հրդեհաշիջման միջոցներով, ինչպես նաև ծանուցում սույն կանոնների մասին:

2. Գյուղատնտեսական նշանակության հողերի միջտարածությունները, անցումները կարող են օգտագործվել նաև որպես հակահրդեհային ճանապարհներ և պետք է ազատ լինեն հրշեջ ավտոմեքենաների և հրդեհային գույքի մոտեցման համար: Հակահրդեհային ճանապարհները պետք է կառուցվեն այնպես, որ դրանք ծառայեն նաև որպես հնարավոր հրդեհների տարածման կանխման պատնեշ, ինչպես նաև առկա հրդեհների մեկուսացման հենակետ:

3. Հակահրդեհային միջտարածությունները պետք է ժամանակին մաքրվեն հրդեհավտանգ թափոններից: Հրդեհավտանգ թափոնները, աղբը պետք է հավաքվեն հատուկ հատկացված տարածքներում և տեղափոխվեն: Հակահրդեհային միջտարածություններում արգելվում է կրակի միջոցով թափոններ ոչնչացնելը, իսկ աղբաոչնչացման համար նախատեսված հատուկ տեղերում աղբի այրման նկատմամբ ապահովել հսկողության իրականացումը:

4. Եթե գոյություն ունեն բնական կամ արհեստական ջրաղբյուրներ (գետեր, լճեր, ավազաններ և այլն), պետք է կառուցվեն մերձատար ճանապարհներ, ինչպես նաև հատուկ հարմարեցված պինդ ծածկույթով հրապարակներ 12x12 մ-ից ոչ պակաս չափերով՝ հրշեջ մեքենաների կայանման և տարվա ցանկացած ժամանակ ջուր վերցնելու համար: Արհեստական ջրամբարների, դրանց մոտենալու ճանապարհների, ինչպես նաև ջրառման սարքավորումների մշտապես պատրաստականության ապահովման համար պատասխանատու են համապատասխան կազմակերպությունները:

5. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրներին, հրդեհային գույքին մոտեցման ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն: Վերակառուցման պատճառով ճանապարհների փակման դեպքում, ջրաղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:

6. Ջրաղբյուրների մոտ, ինչպես նաև դեպի դրանք տանող ճանապարհներին պետք է տեղադրվեն համապատասխան ցուցատախտակներ՝ մինչև ջրաղբյուր եղած հեռավորության նշումով:

7. Բնական և արհեստական ջրաղբյուրների բացակայության դեպքում գլանատակառներում և այլ տարողություններում հրդեհաշիջման նպատակով պետք է ստեղծվեն ջրի պաշարներ:

8. Հրդեհավտանգ ժամանակաշրջանում գյուղատնտեսական նշանակության հողերում հրդեհների կանխարգելման նպատակով, արգելվում է՝

1) վառել խարույկներ: Խիստ անհրաժեշտության դեպքում, խարույկ կարելի է վառել բաց տարածքում՝ շրջապատելով այն 0,5 մետրից ոչ պակաս հանքայնացված շերտով և խարույկը հանգցնել ջրով կամ ծածկել հողով.

2) նետել այրվող լուցկի, չմարված ծխախոտի մնացորդ.

3) ավտոմեքենաները լցավորել վառելիքով՝ աշխատող շարժիչների դեպքում.

4) շահագործել անսարք սնուցման համակարգով մեքենաներ.

5) կրակի հետ անզգույշ վարվել՝ ծխել, հրդեհավտանգ աշխատանքներ կատարել, բաց կրակից օգտվել, ինչպես նաև կրակն առանց հսկողության թողնել.

6) կատարել չոր խոտի և խոզանի այրում (բացի վերահսկելի այրումներից, որոնք իրականացվում են սահմանված կարգով, որոշակի ժամանակահատվածներում՝ տեղական իշխանությունների թույլտվությամբ և լիազոր մարմնի հետ համաձայնեցված).

7) արևով լուսավորվող տարածքներում թողնել շշեր, ապակու կտորներ, քանի որ դրանք կարող են ֆոկուսացնել ճառագայթներն ու աշխատել որպես հրկիզող լինզաներ.

8) թողնել (թափել) քսայուղով, բենզինով, կերոսինով և դյուրավառ այլ հեղուկներով ներծծված լաթեր (բացի հատուկ հատկացված տեղերից).

9) առանց շարժիչի ծածկոցների կամ դրանց բաց լինելու դեպքում աշխատեցնել տրակտորներ, ինքնագնաց ամրաշրջանակներ, ավտոմեքենաներ.

10) առանց լիազոր մարմնի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության հետ համաձայնեցնելու կրակի հետ կապված աշխատանքներ կատարել:

9. Հրդեհավտանգ ժամանակաշրջանում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելիս հրդեհաշիջման նպատակով պատրաստ վիճակում պետք է

ունենալ հակահրդեհային սարքավորումներ ու սկզբնական հրդեհաշիջման միջոցներ (կրակմարիչներ, ջրով լի տակառներ, ավազով լի արկղեր, կացիններ, բահեր և այլն):

10. Դաշտային պայմաններում նավթամթերքների պահեստավորումը և լցավորումը պետք է կատարվի խոտից ու աղբից մաքրված հրապարակներում, որոնց շուրջը պետք է լինի ոչ պակաս, քան 4 մետր լայնությամբ հերկված շերտ: Լցավորումը թույլատրվում է նաև կատարել կալից, խոտի դեզերից, ծղոտներից, հացահատիկային զանգվածներից ոչ պակաս քան 100, իսկ շինություններից՝ 50 մետր հեռավորության վրա գտնվող հերկված տարածությունում:

11. Բերքահավաքի մեքենաները, կոմբայնները, տրակտորները և ավտոմեքենաները պետք է ունենան հրդեհաշիջման սկզբնական միջոցներ (երկուական կրակմարիչ, սվինաձև բահ), կարգավորված սնման, վառելքի, յուղման համակարգեր, ինչպես նաև կահավորված լինեն սարքին կայծմարիչներով:

12. Հատիկավոր կուլտուրաների հասունացումից առաջ անտառների, տորֆային զանգվածների, տափաստանային շերտերի, երկաթգծերի, ավտոճանապարհների մերձակա տարածություններում հացահատիկային դաշտերը պետք է հերկվեն 4 մ լայնությամբ:

13. Ժամանակավոր դաշտակացարաններն անհրաժեշտ է տեղադրել հացահատիկային զանգվածներից, կալատեղերից առնվազն 100 մ հեռավորության վրա: Դաշտակացարանների, կալատեղերի տարածքները պետք է ունենան 4 մ լայնությամբ հերկված շերտեր:

14. Գյուղատնտեսական նշանակության հողերում, բարձր հրդեհավտանգության ժամանակաշրջանում հրդեհների առաջացման կանխարգելման և դրանց դեմ պայքարի նպատակով անհրաժեշտ է.

1) մշակել ու իրագործել հակահրդեհային պրոֆիլակտիկ միջոցառումներ (հակահրդեհային քարոզչություն, տարածքի բարեկարգում, միներալիզացված շերտերի, հակահրդեհային ճանապարհների ու ջրամբարների կառուցում, և այլն).

2) առավել հրդեհավտանգ վայրերում՝ ճանապարհների երկայնքով, տեղադրել կրակի հետ զգույշ վարվելու և հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու մասին նախազգուշացնող ցուցանակներ.

3) ստեղծել հակահրդեհային պատնեշների համակարգ, որը սահմանափակում է հնարավոր հրդեհների տարածումը.

4) իրականացնել հրդեհային անվտանգությունն ապահովող այլ միջոցառումներ:

15. Դեզերը, բարդոցները, ծածկարանները և կոշտ կերերի դարսակները պետք է տեղակայվեն էլեկտրահաղորդման գծերից ոչ պակաս, քան՝ 15, ճանապարհներից՝ 20, շենքերից՝ 50 մետր հեռավորության վրա:

16. Դեզերի (բարդոցների) տեղակայման հարթակները, ինչպես նաև դեզերի զույգերի, դարսակների շրջակա հողատարածությունը պետք է հերկվի 4 մետր լայնություն ունեցող շերտով: Հերկված հողաշերտի եզրից մինչև հարթակում տեղադրված դեզը (բարդոցը) պետք է լինի ոչ պակաս, քան 15 մետր, իսկ մինչև առանձին տեղադրված դեզը (բարդոցը) ոչ պակաս, քան 5 մետր:

17. Դեզի (բարդոցի) հիմնատակի մակերեսը չպետք է ավելի լինի 150 մ^2-ից, իսկ մամլած չոր խոտի (ծղոտի) դարսակինը՝ 500 մ^2-ից: Առանձին դարսակների, ծածկարանների և դեզերի (բարդոցների) հակահրդեհային միջտարածությունները պետք է լինեն 20 մ-ից ոչ պակաս: Դարսակների, ծածկարանների և դեզերի (բարդոցների) զույգերով տեղադրման դեպքում՝ միջտարածությունները պետք է լինեն ոչ պակաս, քան 6, իսկ դրանց զույգերի միջև՝ 30 մետր: Բարձր խոնավություն ունեցող դեզերում (բարդոցներում) պետք է իրականացվի ջերմաստիճանի նկատմամբ հսկողություն:

18. Տրանսպորտային միջոցները խոտի դեզերին պետք է մոտենան շարժիչներից արտամղվող գազերի ուղղությանը հակառակ:

19. Չոր խոտը պետք է պահեստավորել կամուրջներից, ճանապարհային շինություններից, գնացքների կազմակերպված երթևեկության ուղիներից ոչ պակաս, քան 50 մետր հեռավորության վրա: Չի թույլատրվում դրանց պահեստավորումը էլեկտրահաղորդման և կապի գծերի տակ:

20. Գյուղատնտեսական նշանակության հողերում հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար պատասխանատու անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: